№ 105 ՀԻՆԳՇԱԲԹԻ [illegible]ՏԵՄԲԵՐԻ 14 **1895** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14 № 105

ԿՈՒԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 [illegible] կէս տարվանը 6 րուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
ՏԵԼԵՖՕՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՏԵԼԵՖՕՆ № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բնական հետևանք. Սուլթանը և պետութիւնները. Թիւրքական օր-օր-օր. Հայոց հարցը և եւրոպական մամուլը. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կովկասեան Հայոց Բարեգործական ընկերութեան կանոնադրութիւնը. Դատարանի դահլիճից. Նամակ Ատրպատականից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից.—ԽԱՒՈՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ՑԱՑՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մեր ներկայ թատրոնը.

ԲՆԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔ

Թիւրքիան շատ թանգ կը վճարէր, եթէ կամենար աւերմունքի նման դէպքեր այժմ տեղի չունենային Փոքր-Ասիայում և Թիւրք կառավարութեան կոտրած վարկը աւելի ևս չընկնէր եւրոպայի առաջ: Այն ժամանակ գուցէ կաջողվէր Թիւրքիային Սասունի կոտորածը նկատել տալու իբրև մի բացառութիւն, իբրև տարաբաղդ մի թիւրիմացութիւն:

Սակայն, Փոքր-Ասիայի խորքերում կատարվող զեղծումները և անիրաւութիւնները ոչ միայն չեն զարմացնում, այլ և ըստ պատնէշի բնաւորութիւն են առանում: Սեբաստիայի, Կարահիսարի կողմերից գանգատներ են Թափվում եւրոպական հիւպատոսարանները և Կ. Պոլսի պատրիարքարանը: Փոքր-Ասիայի զանազան տեղերից յայտնում են, որ Թիւրք և քիւրդ ազնիկ անձինք սպառնալիքներ են անում քրիստոնեայ ժողովրդի հասցէին:

Թիւրքիան, կրկնում ենք, շատ ուրախ կը լինէր, եթէ առժամանակ գոցարէին այդ ախտը անդքերը, եթէ եւրոպական հիւպատոսների վիճողութեան և բողոքի համար նորանոր ախտեր և գազանութիւնների ապացոյցներ չաւելանային: Բայց մահմէտական ժողովուրդը չէ հասկանում իր կառավարութեան նոր քաղաքականութիւնը, նրա աչքակապութեան երանակը և շարունակում է կատարել այն, ինչի համար նրան պատրաստել են տարիներ շարունակ, ինչ որ թելադրել են նրան մոլլաները, դերվիշները, փաշաները և ամէն տեսակ կառավարիչները վերջին տասնեակ տարիներում:

Թիւրք կառավարութիւնը հնձում է իր սերմանածը: Նա ֆանատիկոսացրել է մահմետական ժողովրդին, բորբոքել է նրա մէջ կատաղի ատելութեան զգացմունք դէպի քրիստոնեան, թելադրել է նրան օգտվել քրիստոնեայի կաքից ու կալուածքից, առանց քաշվելու և տատանվելու, և այժմ նա հանդիսատես է միայն իր պատուէրների իրագործմանն: Մոլեռանդ և վայրենի ժողովուրդը, որին պէտք էր սատել և զսպել հեղինակաւոր ոյժով, այժմ, թէ առած, կատարում է անասելի գազանութիւններ առանց դադարելու, և օրից օր աւելի և աւելի կատաղում ու բորբոքվում է՝ իր վայրագ կրքերին յագուրդ տալու՝ նոր սարսափներով:

Թիւրք կառավարութեան այժմեան խըրատները և յորդորները՝ զսպելու ֆանատիկոսացած ժողովրդին, ոչ միայն չեն սանձահարում արիւնի մէջ շաղախված ձեռքերը, այլ և աւելի կատաղեցնում են նրանց, որովհետև անկարելի է թշնամի տարրերի ծայրայեղ կերպով լարված զրուխեան միջոցին՝ յետ կանդնեցնել բարձրացրած սրերը: Այդ սրերը նիւթ են որնում, աւիւն են պահանջում և նրանք վտանգաւոր են նոյն իսկ նրանց համար, որոնք ցանկանում են զըսպանց զսպել:

Չար խրատը, չար քարոզը առաջ են բերել իրանց չար արդիւնքը: Բայց Թիւրքիան կարող է արդեօք գոնե այժմ հասկանալ իր սխալը և մոլորութիւնը և ձեռք վերցնել մի վտանգաւոր և ինքնասպան քաղաքականութիւնից, որից երբէք ոչ մի օգուտ չէ տեսել և անպատճառ վնասվել է, և այն էլ շատ զգալի կերպով:

Թիւրքիայի միակ փրկութիւնը կուլտուրական ոյժերը խրախուսելու և պահպանելու մէջն է: Դրանից դուրս ամէն մի քաղաքականութիւն դատապարտված է անյաջողութեան և խայտառակութեան: Միայն կուլտուրական տարրերը կարող են վերջ տալ ներկայումս սիրող վայրենի խաօսին և դժոխային կացութեան:

ՍՈՒԼԹԱՆԸ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(«Daily News»)

Կ. Պոլսի մեր թղթակիցը մեզ նոր տեղեկութիւններ է ուղարկում, որոնց արժէքը գլխատրապէս նրանց աղբիւրն է, բայց միւս կողմից այնքան մխիթարական են, որ մեզ ակամայ դժուար հաւատալի են թւում: «Ամեն կողմից լսվում է, ասում է նա, որ պալատում մի վճիռ է կայացել բէֆօրմների ծրագրի ընդունելու մասին»: Եթէ այդ ստոյգ է, ուրեմն միանգամայն անհիմն են այն լուրերը, որոնք այնքան ճարպիկ կերպով տարածվեցին, թէ երեք մեծ պետութիւնները համերաշխ չեն գործում: Մի քանի չրջաններում այդ լուրը խիստ անհաճոյ կերպարանք ստացաւ:

Կարծում են, որ ֆրանսիական կառավարութիւնը ծածուկ կերպով քաջալերում է Բ. Դրան՝ դիմադրել այն պահանջներին, որ նա յայտնաբար արել է: Մենք երբէք հաւատ չենք ընծայի այդ չարաբաստիկ ենթադրութիւններին:

Ոչ մի երկիր այնքան զգայուն չէ դէպի իր պատիւը և արժանաւորութիւնը, որքան Ֆրանսիան. մինիստրների համար ոչ մի երկրում այնքան վտանգաւոր չէ, ինչպէս Ֆրանսիայում, մի բարեկամ դրացու հետ միասին գործելու ժամանակ, խարէութիւն և խարդախութիւն բանեցնել և դրանով անուանարկել իրանց համաքաղաքացիներին: Եւ եթէ, անսպասելի կերպով, մի որ և է տհաճութիւն ծագէր բրիտանական միապետութեան և ֆրանսիական հանրապետութեան մէջ, Ռուսաստանը ամենավերջինը կը լինէր, որի հետ Ֆրանսիան կը կամենար վէճի բռնվել: Սըր Ֆիլիպ Կերրին, ինչպէս ամենքը սպասում էին, ամենաազդու դիմումներ արաւ Բ. Դրան: Այսպէս գործելով, նա միայն իրականացրեց լորդ Սոլսբիւրիի լորդերի պալատում արտասանած ճառի խօսքերը:

Դեսպանները սպասում են Բ. Դրան միաժանակ պատասխանին, այնպէս որ, մի քանի ժամից յետոյ, հայկական ճգնաժամը, գէթ անուանապէս, կարող է վերջացած լինել:

Եթէ սուլթանը, թէև ուշ և տհաճութեամբ, ղիջանի մեծ պետութիւնների հատատ և չբռնական ճնշումներին, այն ժամանակ լորդ Սոլսբիւրին կատարեալ իրաւունք կունենայ աջողութիւնը իրան վերագրել, թէև ճշմարիտ է, որ լորդ Րոզբերին և լորդ Կիմբերլէյը սկսեցին այն գործը, որը նա այժմ կամենում է լրացնել:

Մինչդեռ Եւրոպան հակված էր անտարբեր մնալ, իսկ Հայաստանը, ի միջի այլ դժբաղդութիւնների, տանջվում էր և այն պատճառով, որ Բօլգարիան աղատող հռչակաւոր պետական մարդը քաշվել էր քաղաքական ասպարէզից, լորդ Կիմբերլէյն էր,—նրա քաղաքագիտական ճարպիկութիւնը, իբրև արտաքին գործերի մինիստրի, յայտնի է ամենքին, որոնք ծանօթ են իրողութիւնների հետ,—որ չեչտեց Բէրլինի դաշնագիրը ստորագրողների միացած և անմիջական գործակցութեան անհրաժեշտութեան վրա:

Երբ լորդ Սոլսբիւրին պաշտօնի գլուխն անցաւ, նա գտաւ մի պատրաստի տրամադրութիւն, Բ. Դրան վրա համոզելով կամ, եթէ հարկաւորվի, ճնշումով ազդել: Մի նոր երեքպետեան դաշնակցութիւն կազմվեց յատկապէս այդ նպատակի համար, և լորդ Սոլսբիւրին, պէտք է խոստովանել, այդ գործը եռանդով առաջ տարաւ: Նրա ճառը՝ գահական ուղերձի առիթով, չափազանց մեծ ցնծում պատճառեց Կ. Պոլսում: Սուլթանը և իր խորհրդականները համոզվեցին, որ խաղին վերջ պէտք է տալ: Եթէ տօրների կուսակցութեան պարագլուխը, որի վրա նրանք մեծ յոյս էին դրել, ասում է նրանց, որ Թիւրքաց կայսրութիւնը գոյութիւն ունի միայն այն պատճառով, որ Եւրոպան այդ թոյլ է տալիս, և եթէ նրանք այնպէս չը վարվեն, ինչպէս հարկն է, Թիւրքիան բաժան բաժան կը լինի, նրանք պէտք է հասկանային, որ նրանց այլ ևս երկար ժամանակ թոյլ չի տրվի քրիստոնեաներին հալածելու հաճոյքն ունենալ: Նրանք վերջին փորձն արին՝ բողոքել Ֆրանսիայի և Ռուսաստանի առաջ Անգլիայի դէմ: Սակայն այդ էլ չաջողվեց, և խոնարհվելը անխուսափելի դարձաւ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՐ ՆԵՐԿԱՅ ԹԱՏՐՕՆԸ

Երեսուն և հինգ տարուց աւելի է արդէն, որ հայոց թատրոնը գոյութիւն ունի Թիֆլիսում, և մօտ երեսուն տարի է, որ նա մուտք է գործել նաև կովկասեան հայաբնակ քաղաքները. իսկ վերջին ժամանակներումս մի քանի գիւղերում էլ սկսվել են հայկական ներկայացումներ:

Բայց քանը նրանումն է, որ մեր ներկայ թատրոնի դռները բաց են չատ քչերի համար, և այն էլ փոքր ի չատէ հասկացող և ունևոր դասակարգի առաջ, որը թէ տեղերի թանգութեան, թէ մեր ներկայացումներից բաւականութիւն չը ստանալու պատճառով, հետզհետէ պակասեցնում է իր այցելութիւնը. իսկ հասարակ կամ ստորին դասակարգը միանգամայն հեռու է թատրոնից, որը անմատչելի է նրա համար, գլխաւորապէս տեղերի թանգութեան պատճառով:

Թիֆլիսի թատրոնի տեղերի գները, եթէ թանգ էլ համարվեն, այնու ամենայնիւ մի կերպ կարելի է բացատրել նրանով, որ ահագին ծախսեր է անում նա՝ թէ դերասանների, և թէ զանազան բեմական պէտքերի վրա: Բայց ինչով բացատրենք թատերասէրների ներկայացումների տեղերի թանգութիւնը:

Բացատրվում է այդ նրանով, որ թատերասէրների ներկայացումներից գոյացած զուտ արդիւնքը գնում է այս ինչ կամ այն ինչ հիմնարկութեան օգտին:

Ուրեմն մեզանում թատրոնը ծառայում է ըստ մեծի մասին ոչ բուն իր նպատակին, այլ նա մի գեղեցիկ պատրուակ է դառնում՝ զանազան ազգային հիմնարկութիւններին օժանդակութիւն հասցնելու համար:

Մեզ չէ արդեօք ինքը թատրոնը:

Միթէ թատրոնը մի այնպիսի հիմնարկութիւն չէ, որի անհրաժեշտութեան, գոյութեան և առաջադիմութեան համար ամեն մէկը մեզանից նախանձախնդիր պիտի լինէր, ինչպէս որ նախանձախնդիր ենք մեր եկեղեցու, մեր ուսումնարանի, մեր բարեգործական հաստատութիւնների համար...

—

Աւելի պարզենք մեր միտքը:

Մեզանում թատրոնին ծառայում են միայն երկու կարգ մարդիկ, այն է՝ դերասանները և թատերասէրները:

Դերասաններ կամ դերասանական խումբը գտնվում են ներկայումս միմիայն Թիֆլիսում. ուր և թատրոնի ամբողջ եկամուտը գործադրվում է իր և խմբի վրա, իսկ Թիֆլիսից դուրս՝ հայկական թատրոնը պահպանվում է միմիայն թատերասէրների աշխատութեամբ և եռանդով:

Բայց ինչ է արված մինչև հիմա մեր թատրոնի առաջադիմութեան համար,—համարեա ոչինչ: Ինչպէս սկսվել է, այնպէս էլ չարունակվում է: Եւ ընդհանրապէս «Թատրոն», «ներկայացում» բառերի նչանակութիւնը հետզհետէ նսեմանում, ընկնում է մեր մէջ:

Այդ պէտք է վերագրել մեր դերասանական խմբի անաջողութեանը և թատերասէրների անհետաքրքրութեանը:

Դերասանական խմբի անաջողութիւնը կայանում է գլխաւորապէս նրանում, որ նա չէ մտածում օր օրի վրա ուսումնասիրել, բարւոքել իր արուեստը, առաջ քաշել թատրոնի գործը, հաստատ հիմքի վրա դնել նրան, բարձրացնել նրա նչանակութիւնը, սիրելի կացուցանել, պահանջ դարձնել նրան հասարակութեան համար, թէև դրա համար նա ստանում է ոչ այնքան պակաս վարձատրութիւն. այլ միայն աշխատում է մի կերպ, մի երկու փորձից յետոյ, բեմ դուրս գալ, կատարած լինել ձեականապէս իր պարտքը և ստանալ ժամանակին իրան հասանելի դրամը:

Բացի դրանից՝ խմբի ներքին, ընկերական կեանքը այնքան խախուտ է, այնքան վիչացած, որ ամեն մի անդամ իր եսը առաջ տանելով, իր կրքին զոհացում տալով, մէկը միւսի պատիւը, առաւելութիւնը նսեմացնելով, խանգարում է այն միութիւնը, այն համերաշխութիւնը, այն սէրը, որ անպայման անհրաժեշտ է այդպիսի մի գործի բարգաւաճման համար: Դիսցիպլինա, կարգ և կանոն ասած բաները գոյութիւն չունեն նրանց համար: Եւ բնական է, որ այդ ներքին քաչքայումը արտացոլվում է արտաքին անաջողութեամբ բեմի վրա և բեմից—հասարակութեան վրա:

Միւս կողմից, պէտք է խոստովանած, աւելի աչխուժով, աւելի մեծ եռանդով գործում են ամենուրեք թատերասէրները: Նրանք և դեկօրատօրներ են, և դերասաններ, և դերձակներ, և տոմսակավաճառներ, և ծառաներ... մի խօսքով մի տեսակ նահատակներ են հանդիսանում, ըստ երևոյթին, թատրոնի գոյութեան համար: Եւ իրօք, նահատակներ են իրանց գործունէութեամբ. բայց, դժբաղդաբար, այդ գործունէութիւնը հիմնված է չատ խախուտ, մինչև անգամ ձեաստակար հողի վրա.—իրանց անհետաքրքրութեան և անզգուշութեան չնորհիւ՝ յօնքը չինելու վտանգին, աչքն էլ հանում են:

Ահա թէ ինչպէս:

Որովհետև ներկայացումները պատրաստվում են այս կամ այն հիմնարկութեան կամ կարօտ ընտանիքի օգտին, ուրեմն բարեգործական նպատակով, և որովհետև այդ ներկայացումները թատերասիրական են, ուստի ամեն մի գործող խումբ աչխատում է, կարելոյն չափ, բարձր պահել տեղերի գները, իրաւունք է համարում զօռով կպցնել տալ սրան կամ նրան ներկայացման տոմսակները և այն էլ՝ ըստ մեծի մասին, հասարակութեան մի դասակարգի, մինչև իսկ մի և նոյն անձնաւորութիւնների վրա սաղացնելով:

Այսպիսով հասարակութեան այդ չնչին մասը յետ է մղվում թատրոնից, ինչպէս մի զզուեցնող բանից, իսկ միւս, անագին մեծամասնութիւնը, որի մէջ պէտք է նա խոր արմատներ գցէր և որին իրօք կարող էր օգտակար լինել նա, չէ կարողանում մերձենալ նրան՝ տե-

ՅՈ-ՅՈ-ՅՈ ԴԱՀԱՊԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ

Ինչպէս տեսանք, իշխ. Մարիամի ամուսնութեան գործը ընթացք չունի եւ ոչ մի յոյս չկայ, որ նա կարողանայ ամուսնանալ Ալեքսանդր Ալեքսանդրովիչի հետ։ Ինչ վերաբերում է Ալեքսանդր Ալեքսանդրովիչին, նա ամենայն հաւանականութեամբ կ՚ամուսնանայ Ալիքսի հետ։ Ինչ վերաբերում է Ալիքսին, նա ամենայն հաւանականութեամբ կ՚ամուսնանայ

ՂԱՆԴԱԿ ՆՈՏԱՀԱՆԴԵՍ

Նեռատեսիկի 4-ին

Խոշոր եղանակով ծանոթացնելով ընթերցողներին մեր հարգարժան հայրենակիցներին, որոնք ամառվան եղանակը անցկացնում են Նիկոմիդիայի մոտ գտնվող Հերեկեի ծովափնյա գեղեցիկ տեղում, մենք հաճույքով հաղորդում ենք, որ այդ տեղում ամառանոցներ ունեցող մեր հայրենակիցներից շատերը, որոնք մինչև այժմ ամառանոցներում ունեցել են միայն ամառային բնակարաններ, այս տարի ձմեռային բնակարաններ են կառուցանում և ոմանք էլ արդեն ավարտել են իրենց շինարարությունները։ Այդ ամառանոցներից մեկի տերը՝ Ս. Ա. Ղազարյանը, ամառանոցի մոտ ունի նաև մի մեծ այգի, որի մեջ նա ամեն տարի մեծ քանակությամբ պտուղներ է ստանում։ Այդ պատճառով նա ամեն տարի իր ամառանոցում մեծ հյուրասիրություն է անում իր հարևան ամառանոցատերերին։ Այս տարի էլ նա հյուրասիրեց նրանց, և հյուրերը, որոնց թվում էին նաև Ղազարյանների ընտանիքի անդամները, ուրախ ժամանակ անցկացրին։ Ուրախության ժամանակ հյուրերից մեկը՝ Ա. Ղազարյանը, ասաց, որ ինքը ամառանոցի մոտ ունի 1000 ծառ, որոնցից ամեն տարի ստանում է 5150 ոկա պտուղ, որից 1000 ոկան ինքն է ուտում, իսկ մնացածը ծախում է։ Ղազարյանի այս խոսքերը շատ զարմացրին հյուրերին, որովհետև նրանք գիտեին, որ Ղազարյանի ընտանիքը շատ աղքատ է, և նրանց ամառանոցը ևս նա կառուցել է ուրիշների օգնությամբ։ Ուրախության ժամանակ հյուրերից մեկը հարցրեց Ղազարյանին, թե ինչպես է նա կարողանում այդքան պտուղ ստանալ, որովհետև նրանք գիտեին, որ նա ոչ մի ուրիշ եկամուտ չունի, բացի այդ ծառերից։ Ղազարյանը պատասխանեց, որ ինքը ամեն տարի ծառերի տակ գոմաղբ է լցնում, ինչի շնորհիվ էլ ծառերը այդքան պտուղ են տալիս։

Ղազարյանի այս պատասխանը ուրախացրեց հյուրերին, որովհետև նրանք գիտեին, որ Ղազարյանի ընտանիքը շատ աղքատ է, և նրանց ամառանոցը ևս նա կառուցել է ուրիշների օգնությամբ։ Ուրախության ժամանակ հյուրերից մեկը՝ Ա. Ղազարյանը, ասաց, որ ինքը ամառանոցի մոտ ունի 1000 ծառ, որոնցից ամեն տարի ստանում է 5150 ոկա պտուղ, որից 1000 ոկան ինքն է ուտում, իսկ մնացածը ծախում է։ Ղազարյանի այս խոսքերը շատ զարմացրին

ԹԱՌՆ ԼՈՒԻՐԵՐ

Յայտնի վիպասան Մարկ Տվէյն, որը նորերս կորցրեց իր ամբողջ կարողութիւնը այն ֆիրմայի մնանկութեան պատճառով, ուր նա պահ տուած ունէր իր փողերը, ըստ երևոյթին, չէ կորցրել զրանից իր իմաստը: Ամերիկի ազատութիւն են թողնում զանել նրա նոր վէպի առաջին հինգ գլուխները, որոնք տպուում են «Life» լրագրում: Ահա նրանց բովանդակութիւնը: Գլուխ I. «Եւ դու միշտ այդպէս կը սիրես ինձ, ինչպէս այժմ», հարցրեց կինը, մօտենալով ամուսնին և դնելով իր գլուխը նրա ուսի վրա: «Միշտ», պատասխանեց ամուսինը՝ գրկելով նրան և համբուրելով նրա չրթունքները: Գլուխ II. «Եւ դու միշտ այդպէս կը սիրես ինձ, ինչպէս այժմ», հարցրեց կինը, մօտենալով նրան և դնելով իր գլուխը նրա ուսի վրա: «Միշտ», պատասխանեց ամուսինը՝ գրկելով նրան և համբուրելով նրա չրթունքները: Գլուխ III. «Եւ դու միշտ այդպէս կը սիրես ինձ, ինչպէս այժմ» և այդպէս, բոլոր հինգ գլուխները, իսկ դրանց տակ «կը շարունակվի»: Սակայն խմբագրութիւնը նախազգուշացնում է, որ դրանց նման են և հետևեալ չը տպված գլուխները: Հասանական է, ասելացնում է խմբագրութիւնը, ընթերցողները չան միակերպ կը գտնեն այդ վէպը, ինչպէս մենք ևս սկզբում կարծում էինք, բայց հոչակաւոր վիպասանը հանգստացրեց մեզ այդ կողմից՝ բացատրելով, որ կինը նոյնն է բոլոր գլուխներում, բայց ամուսինը՝ ամեն անգամ ուրիշ:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԴԱՐՁԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 սեպտեմբերի: «Нов. Время» լրագրին հեռագրում են Սեվաստօպօլից, որ Սեվաստօպօլի ռմբակոծութեան առաջին տարեդարձին տեղի կունենայ Նախիմովի արձանի հանդիսաւոր բացումը:

«Свѣтъ» լրագիրը տատամ է, որ իշխան Լօբանով-Րօստովսկի կը վերադառնայ Պետերբուրգ սեպտեմբերի 20-ին:

ԲԵՐԼԻՆ, 12 սեպտեմբերի: Ամսեզ հասած ֆինանսների մինիստր վիրաւոր:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Սեպտեմբերի 12-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ	. .	92 ր.	75 կ.
Հեռլինի վրա 100 մարկ	— . .	45 »	22½ »
Փարիզի վրա 100 ֆրանկ	— . .	36 »	62½ »
Ոսկի	— — արժէ . .	7 »	40
Մաքսային կուպօններ	— .	148 »	— »
Արծաթ	— — — . .	— »	— »
Բօրսային դիսկօնտ	— . .	5 —	7%
4% պետական բէնտա		98 »	50 »
5% ոսկեայ բէնտա 1884 թ. . . .		161 »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.		279 »	— »
— — երկրորդ —		238 »	50 »
Գրաւ. թղթ. — — — .		214 »	50
5% պետական երկաթուղ. բէնտա.		101 »	50 »
4% Ներքին փոխառութեան . . .		98 »	50
4½% գրաւ. թղթ. ադն. կալ. բանկի		100 »	50 »
Ադն. կալ. Պետ. բանկի խազարկութ.			
4½% վկայակ. դիւզ. հող. բանկի.		100⅞	— »
Փոխ. կրեդիտ. ընկերք. մոսալ.		150 »	50 »
— — — թղթագ. .		— »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.			
ընկերութեան օբլիգացիաները.		101 »	75 »
Մօսկվայի քաղաք. օբլիգացիաներ.		101 »	75 »
Ոդէսայի — —		100 »	— »
Թիֆլիսի — —		99⅝ »	— »
Գրաւ. թղթ. Թիֆլ. կալ. բանկի 6%		101 »	— »
— — — 5% . .		99½ »	— »
— — Քութայիսի 6% . .		101 »	— »
— — — 5% . .		99½ »	— »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ և վաճառվում է կենտրօնական գրավաճառանոցում
ԳՐԻԳՈՐԻՍ ԵՐԶՆԿԵԱՆՑԻ
փոխադրած (Գօլդինբէրգից)
ԹԻԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ
ԱՌԱՋԻՆ ՄԱՍԸ
6-րդ տպագրութեամբ, անփոփոխ:
Հատով գինն է 30 կօպէկ, դուռարով՝ 24 կօպ.:
(№ 104) 1—3

ՔՐԻՀՈՎ Է ՏՐՎՈՒՄ

Թայլեանցի տունը, Էկզարխի հրապարակի մօտ, վերին յարկում, երեք սենեակ ամենայն յարմարութիւններով և ջրով:
(№ 105) 1—3

Մի քանի տարի պաշտօն վարած **ՅԷՆՋԱԻՈՐ ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ** *յանկանում է տեղ ունենալ Հայոց դպրոցներում: Պայմաններով դիմել՝ Ахалцыхъ.*
Учителю Григоряну, до востребования. (№ 101) 3—3

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐՔԵՐԸ
ՅՕՎՀԱՆՆԷՍ ՀՈՒՍ—10 *Հատը* 50 կ.
ԵՒՆԿՕ ԵՐԱՓԻՇՏ—10 „ 20 կ.
Դիմել կարելի է՝ ՏՓՂ-ՄԻՔԱՅԷԼԵԱՆՑԻՆ
Тифлисъ, Большая Кривая № 3.
(№ 89) 5—6

ՀԱՐԿԱՒՈՐ Է
ՏՆԱՅԻՆ ՎԱՐԺՈՒՀԻ
լաւ իմացող հայոց և ռուսաց լեզուները, 6 և 7 տարեկան երեխաների համար՝ ԲԱԳՈՒՈՒՄ: *Յանկացողները պէտք է դիմեն հետևեալ հասցէով* ԲԱԿՈՒ, Амбарцуму Меликову. (№ 100) 4—6

ՕՐԲԱԶԱՐԻ Հայոց Ճեմական ուսումնարանի համար հարկաւոր են երկու ուսուցիչ՝ մինը ձայնաւոր: Տարեկան վարձ 500 և 400 ր.:
Մեր հասցէն. Армянскъ-Базаръ, Тав. губ., Попечит. Армяно-Базарск. армянскаго приходск. училища. (№ 83) 10—10

Վաճառվում են
Լ և ո ն Ս ա ր գ ս ե ա ն ց ի
„ԱՅՑ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ“
Գինը 60 կօպ.
„ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԴՐՕՇԸ“
Գինը 20 կօպ.
Ս ա ր գ իս Ս ա ր գ ս ե ա ն ց ի
„ԱԳՈՒԼԵՑՈՑ ԲԱՐԲԱՌԸ“
Գինը 2 րուբլի:
կարելի է ստանալ Թիֆլիսի կենտրօնական գրավաճառանոցում: (№ 94) 2—10

Ա Զ Դ
Հանդուցեալ ուսուցիչ Ալէքսանդր Արաբատեանցի այրին՝ Շուշանիկ Արաբատեանցը, ցանկալով յանձնել երկրորդ տպագրութեան իր ամուսնու „ԵՐԿՈՒ ԹՈՒՄԲ“ աշխատութիւնը ի նպաստ Հանդուցեալի զաւակների, դիմում է Հայ Հասարակութեան օժանդակութեանը: Հասցէն՝ Тифлисъ Фомин. ул. д. Давришова № 15:
Բաժանորդագինն է իւրաքանչիւր օրինակի համար 20 կօպ.
(№ 89) 4—5

Լ ր ա տ ե ս ա ւ
ՀԱՄԱՌՕՏ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ
Դաստատութեան պատրաստվողների համար. Թարգմանութիւն Յ. Սահիկեանի:
Գինն է 30 կօպ.
Ծախվում է կենտրօնական գրավաճառանոցում: (№ 89) 4—4

ԲԻԵՐՆՍՏԻԵՐՆԷ-ԲԻԵՐՆՍՕՆԻ
„ՄԻԱԿՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱԶՄԱԿՆՈՒԹԻՒՆ“
աշխատութեան հայերէն թարգմանութեան ցանկացողները թող դիմեն՝ ШУПА книжный магазинъ Теръ-Саакянца.
Գինն է 15 կոպ.
կարելի է ստանալ վերոգիր վաճառով:
(№ 91) 3—4

ԼՈՒՄԱՅ
ԳԱՔՕԻ ԸՆՏԱՆԻՔԸ
ՎԷՊ ԹԻՖԼԻՍԻ ԿԵԱՆՔԻՑ
Գինն է 60 կոպ.
Դիմել այս հասցէով՝ Тифлисъ, Типографія Главноначальствующаго, Сергѣю Назарьянцу. *Թիֆլիսում վաճառվում է նաև կենտրօնական և Զ. Գրիգորեանցի կովկասեան գրավաճառանոցներում:*
ԲԱԳՈՒՈՒՄ ծախվում է Շիրազեանցի գրավաճառանոցում: (№ 64) 5—5

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.
Հնարողները
ԾԱՂԿԵԱՑ Օ-ԴԸ-ԿՕԼՕՆԻ
Զանազան գոյնի
Ներուժիւն! տուալէհի ջուր
«Օ-ԴԸ ԲՐՕԿԱՐ»
ԶԳՈՑՇ ՊԷՏՔ Է ԼԻՆԵԼ ԿԵՂՏՈՒՄՆԵՐԻՑ
(*առ.* 15. № 67) 3—12

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
ՏԱՍՆՁՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Առևտրական կուրսերի նպատակն է՝ մանաւանդ առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատեստատներ:
Առանձին առարկայք սրանք են՝ 1) Առևտրական գիտութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն հարիւրի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մերկանտիլ կանոնագրութիւն և 7) գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը:
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամեն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդօնովի տանը, № 9, Սերգիեվսկայա և Նազօրնայա փողոցների անկիւնում: Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի տպէս եղը. Ծօվհաննէսեանի բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу.
(*ա. ա.*) № 62 16—25

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Հեղինակ Զեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան
ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ Է ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է
Երկու սեռի անձանց, 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, եւ բաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել:
ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ
Ա.) *Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուեփաստութեան:*
Բ) Առևտրական թուաբանութիւն.
Գ) Առևտրական նամակագրութիւն.
Դ) Գեղագրութիւն և ամենավատ ձեռքերի ուղղութիւն:
Պարապմունքները սկսվելու են սեպտեմբերի 15-ից ճաշից յետոյ և պարբերաբար չարունակվելու են իւրաքանչիւր ՕՐՈՒ ամսից յետոյ. իսկ կիր ակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ:
Ցանկացողները թող դիմեն գրասեր կամ անձամբ 4 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ, ՖՐԷՅՀԻՆեան փողոց, տուն Սալխանօվի, № 13:
Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, *խիզդկելի գրավաճառանոցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում:*
ԳԻՆՆ Է 3 ր. 50 կօպէկ:
Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստայի ծախս վճարելու:
(№ 86) (*հ. չ.*) 10—15

ՄԱՔՈՒՐ ԽԻՆԻՆ, ՓՓՄՐԱ-ԱԼԱԹԹՈՒ

կատարեալ հնարաւորութիւն է տրվում ձեռք բերել՝ իւրաքանչիւր տան մէջ այդ անհրաժեշտ բուժիչ միջոցը ամենաէժան գնով, բոլոր նշանաւոր առևտրականների մօտ գտաւոններում:

Բ. ԿԷՕԼԷՐ ԵՒ ԸՆԿ. ՄՕՍԿՎԱՅՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ձիշդ երաշխաւորութեամբ՝ պրէպարատների քիմիական մաքրութեան համար: Անպատճառ պայմանը՝ պահանջել իւրաքանչիւր ապակեայ սրտակի վրա՝ ընկերութեան ֆիրմայի նշանով և դրոշմով, չը փչացած մեսազաթելի յանցիկ ընկերութեան (Բ. Կ. և ընկ.) պլոմբով:
(№ 90) 2—2

ԿՐԱԿԻ ԴԷՄ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ
ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
Ապահովագրում է ամեն տեսակ շինութիւններ Թիֆլիս քաղաքի մէջ
ՏԷԼԷՖՕՆ № 288
Վարչութիւնը գտնվում է քաղաքային տանը, երևանեան հրապարակի վրա, և բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 2½-ը կէս օրից յետոյ:
Մուտքը Վէլիամինօվսկայա փողոցից, քաղաքային դումայի պօդէզդով:
(№ 90) (*հ.*) 4—20

Дозволено цензурою, Тифлисъ, 13 Сентября 1895 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.